Հյուբշման—Մեյե—Բենվենիստի։ Պետք է նշել, սակայն, որ որոշ դեպքերում տառադարձության մեջ նկատվում է հայերենի հին (գրաբար) և նոր արտասանության միօրինակացում, ինչպես՝ ղ-ն միշտ տառադարձվում է gh, թեև գրաբարում այն հնչել է որպես ղ։

Հնչյունական համակարգը քննվում է ըստ ձայնավոր, ձայնորդ և բաղաձայն ենթահամակարգերի, որի ընթացքում հեղինակն առաջնորդվում է համեմատական հնդեվրոպաբանության և հայագիտության դասական մակարդակով (Հյուբշման, Մեյե, Աճառյան), մասնավորապես ընդունելով հնդեվրոպական նախալեզվի պայթական բաղաձայնների չորս շարք, զուգահեռներ անցկացնելով գերմանական լեզուներում (այդ թվում անգլերենում) այդ նույն բաղաձայնների տեղաշարժի հետ և հայերենում կրած նրանց հետագա ձևափոխությունները ներկայացնելով համեմատական աղյուսակների տեսքով։

Որպես վերջաբան, ընդհանուր եզրակացություններից բացի, գրքում ներկայացվում է հայագիտության այժմյան վիճակը, նշվում, որ հայերենի ուսումնասիրության կենտրոնը ներկայումս Եվրոպայից տեղափոխվել է Հայաստան, որտեղ հայագիտական ավանդական գիտակարգերի հետ մեկտեղ զարգանում են նաև փորձառական հնչյունաբանությունը, հանրալեզվաբանությունն ու հոգեբեզվաբանությունը, լեզվաբանական աշխարհագրությունն ու մեքենական թարգմանությունը և այլ ժամանակակից ուղղություններ։ Վերջում, հավելվածի ձևով տրվում է նաև գրքում տեղ գտած բառանյութի հայերեն-անգլերեն բառարան և հատընտիր մատենագիտություն։

Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

LOUIS VANDEN BERGHE EN LEON DE MEYER, Urartu: een vergeten cultuur uit het bergland Armenie, Saint-Pietersabdij-Gent, 9 oktober 1982—30 januari 1983.

ԼՈՒԻՍ ՎԱՆԴԵՆ ԲԵՐԳԵ ԵՎ ԼԵՈՆ ԴԵ ՄԵՅԵՐ. *Ուրարտու. Հայկական լեռնաշխարհի մոռացված մշակույթը. Սենթ-Պիտերսաբդիջ-Գենտ, 9 հոկտեմբերի 1982—30-հունվարի 1983*

Վերջին տարիներս Ուրարտուի պատմության և մշակույթի նկատմամբ հետաքրքրությունը աշխարհում կրկին աճել է։ Եվրոպայի տարբեր երկրներում կազմակերպվում են ուրարտական մշակույթին նվիրված զանազան ցուցահանդեսներ, հրատարակվում են կատալոգներ[1]։ Վերջիններիս շարքում ուշագրավ է հոլանդացի գիտնականներ Լուիս Վանդեն Բերգեի և Լեոն Դե Մեյերի (աշխատակցել է նաև մի երրորդ անձ, որի անվան սկզբնատառերն են նշված միայն՝ B. O.) «Ուրարտու, Հայկական լեռնաշխարհի մոռացված մշակույթը» կատալոգը։

Մյունխենյան կատալոգի համեմատությամբ, որտեղ յուրաքանչյուր բաժին գրված է տվյալ շրջանի մասնագետի կողմից, գրախոսվող աշխատանքը որոշ չափով կոմպիլյատիվ բնույթ ունի։ Կատալոգի կարևոր արժանիքներից մեկն այն է, որ այստեղ ի մի են բերված Արևմտյան Եվրոպայի (մասնավորապես Շվեյցարիայի) թանգարաններում պահվող ուրարտական նյութերը, որոնց հրատարակությունը մեծապես էր նպաստի դրանք գիտական շրջանառության մտցնելու գործին։

Կատալոգը սկսվում է Ուրարտուի պատմության ուսումնասիրությանը նվիրված ոչ մեծ հոդվածով։ Այնուհետև որոշ տեղեկություններ են տրվում Ուրարտուի պատմական աշխարհագրության ու քաղաքական պատմության մասին։ Կատալոգում տեղ է գտել նաև ուրարտական արքայական դինաստիաների լրացված համեմատական ժամանակագրական աղյուսակը, որտեղ Ուրարտուի պատմության վերջին շրջանը և ժառանգորդության հաջորդականությունը ներկայացված է երկու տեսանկյունով, որոնցից առաջինը Ն. Վ. Հարությունյանի առաջարկած արքայացանկն է[2], իսկ երկրորդը հայտնի է Մյուն-

[1] Urartu, Ein wiederent deckter Rivale Assyriens. München, 1976; Urartu, Das Reich am Ararat. Hamburg, 1979; R. Tanabe, A. Hori, S. Miyashita, K. Ishida. Studies in the Urartian Bronze Objects from Japanese Collections.—Bulletin of the Ancient Orient Museum, v. IV, Tokyo, 1982.

[2] Н. В. Арутюнян. Некоторые вопросы последнего периода истории Урар-

խենի կատալոգից[3]. տարբերությունը այն է միայն, որ Մինուայի որդի Ինուշպուան այստեղ առանձնացված է և նրա անվան հիշատակությամբ ուրարտական դինաստիայի առաջին ճյուղն ընդհատվում է։ Մեզ թվում է, առանձին ճյուղ անհրաժեշտ էր առանձնացնել նաև Իշպուինի որդի Սարդուրիի համար (ինչպես ժամանակին առաջարկել է Լման Հաուպտը), որի անունը հայտնի է Ասորեստանի արքա Սարգոն II-ի մի արձանագրությունից[4]։

Կատալոգում համառոտ ակնարկ է նվիրված ուրարտերեն լեզվին, գրին և արձանագրություններին, ինչպես և տարբեր աստվածությունների պաշտամունքին ու պատկերագրությանը։ Համեմատաբար մեծ ուշադրություն է դարձված ուրարտական ամրոցների, ռազմական, քարանձավային կառույցների և պաշտամունքային շինությունների ճարտարապետությանը. հրատարակված են լուսանկարներ, չափագրություններ ու վերակազմություններ ուրարտական այնպիսի հայտնի հուշարձանների, ինչպիսիք են Կարմիր բլուրը, Բաստամը, Ալթին Թեփեն, Վանի քարանձավները։ Առանձին հոդվածներ են նվիրված Ուրարտուի բանակագործությանը, որմնանկարչությանը, մետաղի մշակման ու դրվագման արվեստին և բրոնզե անոթների պատրաստմանը։ Քարափորագրության բաժնում քննարկվում են ուրարտական կնիքների երեք տիպեր և նրանց վրայի պատկերների մի քանի սյուժեներ։ Կատալոգի 12-րդ բաժինը նվիրված է ուրարտական կահույքին և նրա վերականգնման սկզբունքներին (իմը ունենալով Ասորեստանից, Հյուսիսային Ասորիքից, Եգիպտոսից և Հնդկաստանից հայտնի համանման օրինակները)։

Կատալոգի պատկերների մասը կազմված է 239 իրերի նկարներից։ Այն սկսվում է մի քանի գունապարդ անոթների և բրոնզե արձանիկների լուսանկարներով, որոնք միանգամայն իրավացիորեն վերագրվում են նախաուրարտական շրջանին։ Կատալոգում ուշադրություն են դրավում սաղավարտների լուսանկարները, որոնց մի մասը հրատարակվում է առաջին անգամ։ Առանձնապես հետաքրքիր է մ. թ. ա. IX դարի վերջին քառորդով թվագրվող, Իշպուինի արքային պատկանող կատարով (գավգամակով) սաղավարտը, Մայնցի Ռոմանո-գերմանական թանգարանից։ Այն ուրարտական սաղավարտների մի նոր տեսակ է, որը հայտնի էր միայն էրեբունիի որմնանկարներից։ Այս իրը կատալոգում հրատարակված է ոչ ճիշտ դիրքով. սաղավարտի կատարը պետք է ավարտվի առջևում։

Նոր չեն, բայց մեր դիտելիքները լրացնում էին առյուծի պատկերներով վահանները, նրանց բեկորները և բրոնզե միջնամասերը, ինչպես և տարբեր ձևերի բրոնզե լանջապանները՝ զարդարված խալդի աստծու թևավոր պատկերներով. և խաչաձև լանջապանները, որոնցից մեկի վրա դրվագված է կենաց ծառի շրջված պատկերը։ Կատալոգում սխալմամբ լանջապան են համարվել նաև ձիու ճակատակալները։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում առաջին անգամ հրատարակվող ձիու բրոնզե կլոր երախակալները, որոնցից մեկը առյուծաձև է և ունի սեպագիր արձանագրություն՝ «Ինուշպուայի զենքի տուն»[7]։ Սա առաջին և առայժմ միակ ուրարտական արձանագրությունն է, որտեղ հիշատակված Ėurishusi-ն թագավորի չի պատկանել։

Հատուկ ուշադրության են արժանի մեծ մասամբ առաջին անգամ հրատարակվող ռազմակառքի լծասարքի մասը կազմող քաշանի ծայրակալները՝ զարդարված գրիֆոնների, թևավոր ցուլերի բարձրարվեստ պատկերներով։ Այս իրերից մեկն ունի արձանագրություն՝ «Մինուայի զենքի տուն» և թվագրվում է մ. թ. ա. IX դարի վերջով—մ. թ. ա. VIII դարի սկզբով։ Կատալոգում հրատարակված մյուս համանման քաշանի ծայրակալները պիտի որ նույն թվագրությունն ունենան։ Բոլորն էլ ծագում են Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններից. նման իրեր Սովետական Հայաստանի տարածքից դեռևս հայտնի չեն։

Կանգ չառնելով բազմիցս հրատարակված և այստեղ ևս վերարտադրված առարկաների քննության վրա, կցանկանայինք ուշադրություն դարձնել միայն դրանցից մի քանիսի հրատարակության հետ կապված առանձնահատկություններ-

---

ту.—Древний Восток, 2, Ереван, 1976, с. 113—114.

[2] Urartu, Zeittafel der urartäischen Könige, S. 15.

[4] И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту.—Вестник древней истории, 1951, №№ 2—4, 49.

[5] № 14, 22, 23, 24։

[6] С. А. Есаян. Искусство портретного изображения Урарту.—«Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 3, էջ 176—190։

[7] Ėurishusi. այս դարձվածքը Ի. Մ. Դյակոնովը թարգմանում է «սպասպեղենի տուն» (տե՛ս И. М. Дьяконов. К вопросу о символике Халди.—Древний Восток, 4 Ереван, 1983, стр. 194).

ին. այսպես, ուղիղ, ծալված հաստացող ծայրերով բրոնզե լկամները (61) անհրաժեշտ է վերագրել ձիու հանդերձանքի տեղական՝ անդրկովկասյան տիպին[8]։ Կատալոգում ներկայացված են ուրարտական մի շարք գոտիներ, որոնց նմանակները հայտնաբերվել են նաև Սովետական Հայաստանի ուրարտական հուշարձաններում։ Կասկած է հարուցում միայն № 93 լուսանկարում պատկերված գոտու ուրարտական լինելը։ Այն տարբերվում է հայտնի ուրարտական գոտիներից ոչ միայն իր զարդամոտիվով, այլև կատարման տեխնիկայով. ուրարտական գոտիների վրա հազվադեպ է հանդիպում «փախչող պարույրների» զարդանախշը. բացի դրանից, ամբողջ գոտին փորագրված է, իսկ ուրարտական վարպետները ուռուցիկ պատկերներ ստանալու համար փորագրման հետ մեկտեղ օգտագործում էին նաև դրվագումը։

Ուշադրություն է գրավում նաև արծաթե փոքրիկ գույլը, Ուրարտուի կենտրոնական շրջաններից, Իշպուինիի և Մենուայի անունից գրված արձանագրությամբ (168), հանգամանք, որը նրանց համատեղ կառավարման մասին մի վկայություն կարող է լինել։ Ցավոք, լուսանկարում արձանագրության միայն մի մասն է երևում (տրված է արձանագրության Մ. Սալվինիի առաջարկած թարգմանությունը)[9]։ Իրի հայտնաբերման վայրի մասին տվյալները այս և Մյունխենի կատալոգներում միմյանց չեն համապատասխանում (Մյունխենի կատալոգում նշված է՝ Անդրկովկաս)[10]։ Կա նույն բնույթի մի այլ վրիպակ՝ Վերին Ռուտհան գտնվում է Հյուսիսային Կովկասում և ոչ թե Վրաստանում[11]։

Կատալոգում հրատարակված են նաև կենդանակերպ գունազարդ անոթներ, որոնք իրենց վրա կրում են իրանական արվեստի ազդեցությունը և ծագում են հյուսիս-արևելյան Իրանից։

Այս կատալոգը կարող է հետաքրքրել ինչպես հնագետներին ու Հին Աշխարհի պատմությամբ զբաղվող մասնագետներին, այնպես էլ արվեստի տեսաբաններին։

Լ. Ն. ԲԻՑԱԴՈՎ

---

[8] С. А. Есаян, Э. М. Геворкян. Развитие удил в древней Армении.—Тезисы докладов всесоюзного симпозиума «Культурный прогресс в эпоху бронзы и раннего железа». Ереван, 1982, с. 118.

[9] M. Salvini. A dedicatory inscription of the Urartian King Ispuini.—Assur, v. I, № 8, 1978, p. 1—4.

[10] Urartu, p. 75, № 107, pl. 10.

[11] Е. И. Крупнов. Древняя история Северного Кавказа. М., 1960, с. 226—228.